ԱԶԱՏՆԵՐԸ ՀԱՅՈՑ ԲԱՆԱԿԻ ԿԱԶՄՈՒՄ Թ-ԺԱ ԴԱՐԵՐՈՒՄ

Կարինէ Ոսկանեան

Բագրատունեաց շրջանի հայոց բանակը բաղկացած էր սերնդից սերունդ ռազմական գործի հետ կապուած, մերօրեայ բնութագրմամբ՝ արհեստավարժ զինուորականներից, պատերազմի ժամանակ հաւաքագրուող աշխարհազօրից եւ վարձու զինուորներից: Բանակի հիմքը, ռազմական աւանդոյթների կրողը գլխաւորապէս զինուորականների դասն էր, որի աչքի ընկնող հատուածը կազմում էին ազատները[1]:

Միջնադարեան հայ իրականութեան մէջ ազատ բառը, որպէս սոցիալական տերմին, եղել է հասարակութեան վերնախաւը, ողջ արտօնեալ դասը բնորոշող տերմին: Նեղ առումով ազատը դարձել է թագաւորի եւ նախարարների հետ գերակայ-ստորակայական (սիւզերեն-վասալային) յարաբերութիւններով կապուած մանր հողատէրերի համար բնութագրական տերմին: Քանի որ մանր հողատէրերի համար գլխաւորը յօգուտ իրենց գերակաների կատարած զինուորական ծառայութիւնն էր, այդ պատճառով էլ մանր հողատէրերի հիմնական զբաղմունքը դարձել է ռազմական գործը, իսկ նրանց համար յատկանշական ազատ բառը վերածուել է զինուորական դասի անդամների համար բնութագրական տերմինի:

Ազատները ներկայացնում էին աւատատիրական աստիճանակարգութեան ստորին աստիճանը: Վաղ միջնադարում նրանք անցումային տեղ էին զբաղեցնում նախարարների եւ գիւղացիութեան միջեւ, տնտեսապէս ու քաղաքականապէս կախուած էին նախարարներից, բդեշխներից եւ թագաւորից: Ազատների փոխյարաբերութիւնը նախարարների եւ թագաւորի հետ գերակայ-ստորակայական բնոյթ էին կրում, ազատները իրենց ստացած հողակտորների դիմաց զինուորական ծառայութիւն էին կատարում: Ազատները կենտրոնական իշխանութեան գլխաւոր յենարանն էին եւ կազմում էին բանակի լաւագոյն մասի՝ այրուձիի հիմքը[2]:

Զարգացած աւատատիրութեան դարաշրջանում եւս ազատների դասի մէջ ընդգրկուելու համար զինուորականը պէտք է ստորակայական ծառայութեան անցնէր թագաւորի կամ որեւէ իշխանի մօտ: Ծառայութեան մէջ մտնելն իրական-

1 *Ազատ* բառը իրանական ծագում ունի եւ սկզբնապէս նշանակել է *ազատ*'ի հակադրութիւն անազատների: Որպէս սոցիալական տերմին՝ *ազատ* բառն ունեցել է երկու հիմնական իմաստ՝

1. համայնքի, տոհմի անդամ, քաղաքացիական իրաւունքներով օժտուած անձ.

2. յայտնի տոհմի անդամ, բարձրաստիճան ազնուականութեան ներկայացուցիչ:

Առաւել տարածուած է եղել *ազատ* բառի օգտագործումը իր երկրորդ իմաստով: Ազատը մատնանշել է բարձրաստիճան տոհմի անդամի (տե՛ս **А. Г. Периханян**, *Сасанидский судебник*, Ер., 1973, ст. 445; ее же, Материалы к этимологическому словарю древнеармянского языка, часть I, Ер., 1993, ст. 54):

2 Տե՛ս **Ն. Ադոնց**, *Հայաստանը Յուստինիանոսի դարաշրջանում*, Եր., 1987, էջ 527-533. **Ց. Մանանդեան**, *Երկեր*, հտ. Բ, Եր., 1978, էջ 342. **Խ. Սամուէլեան**, *Հին հայ իրաւունքի պատմութիւն*, հտ. I, Եր., 1939, էջ 221. **А. Г. Сукиасян**, *Общественно-политический строй и право Армении в эпоху раннего феодализма (III-IX вв.)*, Ер., 1963, ст. 106; *Հայ ժողովրդի պատմութիւն*, հտ. II, Եր., 1984, էջ 138:

նացւում էր երդման յատուկ արարողութեամբ: Գերակայ իշխանի եւ զինուորական ազատի միջեւ կնքւում էր համաձայնութիւն, որը հայկական աղբիւրներում կոչւում է դաշինք, ուխտ, միաբանութիւն ուխտի, ուխտ սիրոյ[3]: *Միաբանութեան ուխտը կնքւում էր գրաւոր պայմանագրի միջոցով[4], որտեղ նշւում էին կողմերի իրաւունքները եւ պարտականութիւնները:*

Արեւմտեան Եւրոպայում եւս երդման արարողութիւնը կազմում էր վասալ-սիւզերենային յարաբերութիւնների հաստատման անբաժան մասը: Հանդիսաւոր արարողութեան ժամանակ զինուորականին շնորհւում էր ասպետի կոչում[5]:

Միաբանութեան ուխտը կնքւում էր Աւետարանի եւ խաչի վրայ կողմերի երդմամբ: Այսպէս, օրինակ, 850 թ. Հայոց իշխան Բագարատ Բագրատունին Աղձնիքում տիրող արաբ ամիրայ Մուսա Իբն Զուրարայի դէմ պատերազմելու համար օգնական զօրք խնդրեց Վասպուրականի գահերէց իշխան Աշոտ Արծրունուց. «Իբրեւ յանդիման եղեն դեսպանքն մեծ իշխանի Աշոտոյ, եւ ընթերցաւ զգիր պաղատանացն եւ զյիշատակարան նախնեացն, եւ զմերձաւորութիւն հարազատութեանն եւ զկապակցութիւն ուխտին որ ընդ միմեանս երդմամբք հաստատեալ սուրբ Աւետարանաւն եւ տէրունական նշանաւն՝ համագունդ ժողով առնէր ամենայն աշխարհին եւ ամենայն նախարարօք Վասպուրական տէրութեանն»[6]: Թէեւ այս վկայութիւնը անմիջականօրէն չի առնչւում ազատի եւ իշխանի միջեւ համաձայնութեան կնքմանը, բայց, ինչպէս յայտնի է արեւմտաեւրոպական իրականութիւնից, ազատի եւ իր գերակայի միջեւ եւս հաստատւում էին այդպիսի յարաբերութիւններ: Իսկ գերակայ-ստորակայական յարաբերութիւնների ընդհանուր բովանդակութիւնը, հաստատման ձեւը գրեթէ նոյնն էր՝ անկախ կողմերի հասարակական դիրքից:

Ազատներից էր կազմւում գերակայի անձնական զօրագունդը, որն առանձնանում էր տուեալ իշխանին ենթակայ տիրոյթներից հաւաքագրուող զօրքի մնացած հատուածից՝ որպէս արհեստավարժ, առաւել մարտունակ եւ վստահելի զօրագունդ. «Գուրգէն ընթացեալ զհետ հանդիսի պատերազմող նահատակութեանցն, անդուլ լինելով զցայգ եւ զցերեկ հանդերձ որ ընդ նմա միաբանեալ ազատագունդ զօրացն, եւ ոչ ըստ տեղիս տեղիս ցուցանէին զհանդէս մարտիցն եւ զյաղթութեանն քաջութիւն, այլ բոլորովիմբ ամենայն ուրեք ա-

3 Ռ. Մաթեւոսեան, *Բագրատունեաց Հայաստանի պետական կառուցուածքն ու վարչական կարգը*, Եր., 1990, էջ 52-53

4 Ազատի եւ նրա գերակայի միջեւ կնքուած գրաւոր պայմանագրերի մասին յիշատակութիւններ չունենք, բայց յայտնի է, որ Բագրատունեաց թագաւորութեան շրջանում գերակա-ստորակայական յարաբերութիւններին ընդհանրապէս, կոնկրետ թագաւորի եւ իշխանների փոխյարաբերութիւններին բնորոշ է եղել գրաւոր համաձայնագրերի կնքումը: Այսպէս, Գեղարքունեաց Վասակ իշխանը, երկիւղելով Աշոտ Բ (914-928) արքայից՝ նրան ներկայանալու համար պահանջում է երդմնագիր՝ «յետկար երդման» (տե՛ս Յովհաննէս Դրասխանակերտցի, *Պատմութիւն Հայոց*, www.digilib.am): Մէկ այլ օրինակ. երբ Սահակ Սեւադա իշխանը ապստամբում է, Աշոտ Բ-ն նրա երդմնագրի ձեռագիրը՝ «զյետկար քարտին», իր հետ տանում է մարտի դաշտ: (տե՛ս *նոյն տեղում*): Այս պայմանագրերի գոյութիւնը մեզ հիմք է տալիս եզրակացնելու, որ ազատների եւ նրանց գերակայ իշխանների միջեւ նոյնպէս կնքուել են նմանատիպ գրաւոր երդմնագրեր:

5 Ասպետի կոչման շնորհման արարողութիւնը եւրոպական երկրներում միանման չէր, այն ունէր իր առանձնայատկութիւնները: Դրանցում ընդհանուրն այն էր, որ ասպետի կոչում ստացող զինուորականի ուսին խորհրդանշական ձեւով «թրով հարուածում էին» եւ արտասանում հետեւեալ բառերը՝ «Ցանուն Աստծոյ շնորհում եմ քեզ ասպետի կոչում» (տե՛ս **Д. Т. Денисон**, *История конницы*, militera.lib.ru/h/denison/index.html, Ж. Ж. Руа, История рыцарства, М., 2004, ст. 57):

6 Թովմայի Վարդապետի Արծրունւոյ *Պատմութիւն տանն Արծրունեաց*,- www.digilib.am:

© National Library of Armenia

խոյեանարձակ սլացմամբ ընթանայր. եւ էքբեւ զմի անձն, վառեալ ի զէն եւ ի սուր եւ ի ճակատամարտ՝ հասեալ յամուրս՝ տապալէր զզօրութիւն նոցա սրով եւ աղեղամբ, ի փայլիւն սուսերի եւ նիզակի եւ ի գիշերամարտ նահատակութեան»[7],– գրում է Թովմա Արծրունին:

Զօրքի հաւաքագրման ժամանակ առաջինը գերակայ իշխանի մօտ էին ժամանում ազատները. «Իսկ գահերէց իշխանն Սիւնեաց Սմբատ ժողովեալ զեղբարս, զազգայինս իւր եւ զազատագունդ զօրս ամենայն իւրոյ իշխանութեանն»[8]: Ազատների զօրագնդերը յիշատակւում են զօրքի մնացած հատուածից առանձին. «Յայնժամ (Դաւիթ Կիւրոպաղատը – Կ. Ո.) հրամայեաց ժողով լինել զօրաց իւրոց զազատս եւ զամենայն հեծելազօրս իւր»[9]:

Ռազմական ծառայութեան հետ էր առնչւում ազատների հետեւեալ պարտականութիւնը. նրանք պէտք է իրենց սեփական կալուածքներում զօրահաւաք կազմակերպէին եւ իրենց տիրոյթներից հաւաքագրուած զինուորներին առաջնորդէին մարտի դաշտում: Պատերազմական վտանգի դէպքում ազատը գերակային էր ներկայանում զինուորների հետ միասին: Նկան բերդում ամրանալու ժամանակ Աշոտ Արծրունի իշխանի հետ էին նրա ազատները իրենց զօրքերով. «եւ որք ընդ նմա էին գունդք ազատաց եւ նոցին զօրաց ըստ տոհմս ազգաց»[10]: Գուրգէն Ապուպելճի հրամանատարութեան տակ գտնուող ազատները Արեան լճի ճակատամարտին մասնակցում էին իրենց զօրքերով. «եւ ընդ նմա բազմութիւն ազատաց եւ մեծամեծացն Արծրունեաց նախարարութեանց եւ ամենայն զօրաց նոցա»[11]:

Գերակայի բացակայութիւնը բացասաբար էր ազդում ազատների մարտունակութեան, կազմակերպուածութեան վրայ: Նման իրավիճակ ստեղծուեց Դերենիկ Արծրունու մահից յետոյ, երբ նրա ազատները ցրուեցին. «Վասն զի ազատագունդ զօրքն տիրակորոյսք ցրուեալք ի լերինս եւ ի դաշտս վայիւք եւ ողբովք եւ յորդահոս արտասուօք զերկիրն լրացուցանէին դառնութեամբ»[12]:

Ազատները կատարում էին նաեւ այլ ծառայութիւններ: Դրանցից յատկապէս կարեւոր էր թիկնապահական ծառայութիւնը, որը ազատները իրականացնում էին մշտապէս՝ ե՛ւ խաղաղ, ե՛ւ պատերազմական իրավիճակներում: Այսպէս, Աշոտ իշխանի ազատներից Վահրամը յիշատակւում է որպէս նրա թիկնապահ. «Իսկ իշխանն Աշոտ, առ սակաւ սակաւ ամփոփեալ ընտանեօք իւրովք, եւ ընդ նմա ոմանք յազատաց իւրոց եւ Վահրամ սեպուհ թիկնապահ իշխանի»[13]:

Ազատների զինուորական հաւատարիմ ծառայութիւնը ներառում էր նաեւ գերակայի ընտանիքի պաշտպանութիւնը, նրա զաւակների հանդէպ հոգատար վերաբերմունքը, գերակայի որդիներին ռազմական արուեստին ծանօթացնելու պարտականութիւնը: Այս ամէնը յստակ երեւում է Վասպուրականի գահերէց իշխան Դերենիկ Արծրունու (875-885) մահից յետոյ նրա ազատների վարքագծից, որոնք իշխանի որդիների հանդէպ ծառայական պարտականութիւններ էին կատարել. «լաւ համարեցան զկեանս պանդխտութեան յօտարութեան առնել, քան տեսանել կապեալս արգելեալս ի բանդի զորդիս իշխանին իւրեանց, զիշխան աշխարհիս. որոց սրտի մտօք ի մանկութենէ զհարկ ծառայութեան հատուցեալ էին ըստ օրինի վայելչութեան հնազանդողաց եւ հնազանդելոց»[14]:

Գերակայ իշխանները դրամական միջոցներ էին յատկացնում իրենց ազատներին հաւատարիմ ծառայութեան, պաշտօններ վարելու դիմաց: Այս երեւոյթը Հայաստանում լայն տարածում չունէր. այդ է վկայում Աշոտ Արծրունու կողմից իր ազատներից իւրաքանչիւրին սեփական գանձարանից ամէն տարի պարգեւներ բաժանելը, որը նախկինում այլ իշխաններ չէին կատարել. «զի ըստ իւրաքանչիւր հասակաց՝ զմի մի ոք ի ձէնջ գթալիր սիրով մեծարէի այնչափ, զի եւ զմեծութիւն ընչից, որ ի գանձս իմ՝ ամի ամի յաւար տալով՝ զուարթամիտ սրտիւ ինձ համարէի զյափշտակութիւն տան իմոյ որ ի ձէնջ եւ առ ձեզ, զոր դէ եւ զմի ոք յիշխանաց ոմանց առաջնոց լուեալ ուրուք, եթէ իցէ այսպիսի ինչ արարեալ. եւ ես ամայացեալ ոչ ինչ փոյթ առնէի, միայն ձեզ զլիանալն սիրելով առ այսոքիւք»[15]:

Եւրոպայում հաւատարիմ ծառայութեան կարեւոր նախապայման էր համարւում գերակայի շռայլութիւնը, ստորականերին պարգեւատրելու կարողութիւնը[16]: Հայաստանում եւս գերակայ իշխանի կողմից ազատներին չապահովելու դէպքում վերջիններս կարող էին հեռանալ եւ ծառայութեան անցնել այլ իշխանների մօտ: Այսպէս եղաւ Գրիգոր Դերէնի՝ Աշոտ Արծրունու հօր հետ, որի բոլոր ազատները հեռացան իրենից[17]:

Պատերազմների աւարտից յետոյ ազատները իրենց զինուորներով, ինչպէս նշում են պատմիչները, վերադառնում էին իրենց տեղերը: *Յովհաննէս Դրասխանակերտցին, նկարագրելով Թուղխի ճակատամարտը, նշում է, որ մարտից յետոյ զինուորներից իւրաքանչիւրը գնաց իր տեղը. «Եւ այլ զօրքն ցրուեցան գնացին յիւրաքանչիւր տեղիս»[18]: Թովմա Արծրունին Մուսա իբն Զուրարայի եւ հայ իշխանների միջեւ ճակատամարտի մասին խօսելիս նշում է. «Դառնան զօրքն Հայոց մեծաւ յաղթութեամբ եւ դառնային մեծաւ ուրախութեամբ եւ անտրտում խնդութեամբ յիւրաքանչիւր տեղիս»[19]: Պատմիչների նշած իւրաքանչիւր* տեղերը *ազատների բնակութեան վայրերն էին՝ նրանց ամրոցներն ու բերդերը:*

Քանի որ ամրոցները եւ բերդերը ռազմական յենակէտեր էին, ապա դրանց մարտական պատրաստ վիճակում պահելը կարեւոր խնդիր էր: Ազատների պարտականութիւնը ամրոցի անվտանգութիւնը ապահովելն էր, թշնամու յարձակումների դէպքում ամրոցի պաշտպանութեան կազմակերպումը: Վասպուրականի գահերէց իշխան Աշոտ Արծրունին (885-904) Գագիկ Ապումրուանի դէմ պայքարի ընթացքում Վան քաղաքի պաշտպանութեան կազմակերպումը վստահել էր Ակէացի տոհմից Թադեւոսին եւ Հիսէին. «...եւ զպատրաստութիւն պատերազմողական մարտի ամրոցին հաւատացեալ էր Ցիսէի եղբօր Թադէոսի, որոց Շերեփայ որդիք անուանէին, ի յԱկէացի տոհմէ, քաջամարտիկք եւ հմուտք պատերազմողական յարդարմանց»[20]: Թովմա Արծրունին յիշատակում է ամրոցաբնակ ազատների, որոնց Գագիկ Ապումրուանը պարգեւներ է բաժանում իր կողմը գրաւելու համար[21]:

7 *Նոյն տեղում*, էջ 99

8 *Պատմութիւն Նահանգին Սիսական արարեալ Ստեփաննոսի Օրբելեան արքեպիսկոպոսի Սիւնեաց*,- www.digilib.am

9 **Մատթէոս Ուռհայեցի**, *Ժամանակագրութիւն*,- www.digilib.am

10 **Թ. Արծրունի եւ Անանուն**, էջ 66

11 *Նոյն տեղում*, էջ 72

12 *Նոյն տեղում*, էջ 132

13 *Նոյն տեղում*, էջ 66

14 *Նոյն տեղում*, էջ 117

15 *Նոյն տեղում*, էջ 68

16 **Г. Кенигсбергер**, *Средневековая Европа 400-1500 годы*, М., 2001, ст.115.

17 *Պատմութիւն Շապհոյ Բագրատունւոյ*,- www.digilib.am

18 **Յովհաննէս Դրասխանակերտցի**, էջ 63

19 **Թ. Արծրունի եւ Անանուն**, էջ 56

20 *Նոյն տեղում*, էջ 116

21 *Նոյն տեղում*, էջ 116

© National Library of Armenia

Ազատներն ամրոցներում բնակւում էին՝ իրենց ընտանիքներով: Ատրպատականի Ափշին ամիրայի Հայաստան ձեռնարկած արշաւանքի ընթացքում յիշատակւում են Կարսի բերդի ազատները, որոնք այդտեղ էին իրենց կանանցով եւ երեխաներով[22]: Իւսուֆի արշաւանքի ժամանակ ազատները Երնջակ բերդում ամրացել էին իրենց կանանց հետ միասին. «...գայ ի մարտ ընդ անառիկ ամրոցն Երնջակու, յորում կային պատուական տիկնայքն Սիւնեաց Շուշան եւ Սոփի եւ այլ բազում ազատ կանայք եւ ազատորեար»[23]:

Բագրատունեաց թագաւորութեան ժամանակաշրջանում ազատների դասը միատարր չէր, այլ բաղկացած էր մի քանի շերտերից: Ազատի դիրքը պայմանաւորուած էր նրա ծագմամբ, ժառանգական տիրոյթներով, կոչումով: Ազատների վերնախաւը կազմում էին այն զինուորականները, որոնք սերում էին յայտնի նախարարական տոհմերից: Այս ազատները, որոնք յաճախ նախարարական տոհմերի ղեկավարներ եւ իշխաններ էին, ունէին տէր կամ իշխան տիտղոսները. «Զնոյն տեսեալ ազատացն Վասպուրականի... Յիսէ Տրունեաց տէր որդի Հոնաւարայ, Վարազշապուհ Աբելինից տէր, Թադէոս Ակէացի Շերեփայ որդի»[24]: Ստեփանոս Օրբէլեանը, խօսելով Սիւնեաց Սենեքերիմ թագաւորի ազատներից Հասանի եւ Մահեւանի մասին, նրանց կոչում է մեծ իշխան[25]:

Մատթէոս Ուռհայեցին Վեստ Սարգիս Սիւնեցուն անուանում է հայոց տան իշխան. «Եւ զկնի մահուանն Յովհաննիսի այր ոմն յիշխանաց տանն Հայոց, որ էր այր նենգաւոր, անուն ազատ Սարգիս հայկազն»[26]: Տաթեւի վանքին Սիւնեաց գահերէց իշխան Փիլիպէի (821-848) կողմից արուած կտակագրում, որպէս վկաներ, յիշատակուած ազատների թւում են Փիլիպէ իշխանի որդիները, որոնք ունէին տէր տիտղոսը. «Եւ վկայք լիցին տէր Մուշեղ՝ Սմբատայ որդի, տէր Վահան՝ Բաբգէնի որդի, տէր Բաբգէն եւ տէր Վասակ եւ տէր Աշոտ՝ իմ Փիլիպէի որդիք»[27]: Թովմա Արծրունին ազատների վերնախաւի ներկայացուցիչներին անուանում է Ներսեհ ազատ[28]:

Ազատների վերնախաւի ներկայացուցիչները կոչւում էին նաեւ գլխաւոր ազատներ. «Իսկ մի ոմն ի գլխաւոր ազատացն Հայոց Սարգիս անուն»[29]: Գլխաւոր ազատների շարքում էին հայոց Բագրատունի թագաւորի անմիջական ստորակայ իշխանները, որոնք անուանւում են նաեւ հայոց տան ազատներ. «Իսկ որք առաքեցան առ վարդապետն Հայոց, Գրիգոր Մագիստրոսն որդին Վասակայ եւ հայկազնին մեծն Սարգիս եւ այլք ոմանք յազատացն տանն Հայոց»[30]: Հայոց տան ազատները յիշատակւում են Գագիկ Բ-ի (1042-1045) թագադրման կապակցութեամբ. «Իսկ Վահրամ այր հզօր եւ անուանի, եւ բարեպաշտութեամբ յոյժ վեհ, որպէս թէ ոչ ոք հաւասար նմա Պահլաւ հանդերձ իւրովք ազգակցօք, որդւովք եւ եղբօրորդւովք իբրեւ երեսուն ազատօք ոչ միաբանեցան ընդ նմա. այլ կոչեալ առ ինքեանս զԳագիկ որդի Աշոտոյ, թագաւորեցուցին ի վերայ իւրեանց»[31]:

Ազատների դասի յաջորդ շերտը կազմում էին ազնուականութեան ամենացածր

22 Ստեփանոսի Տարօնեցւոյ Ասողկան *Պատմութիւն տիեզերական*,- www.digilib.am

23 Ս. Օրբէլեան, էջ 78

24 Թ. Արծրունի եւ Անանուն, էջ 117

25 Ս. Օրբէլեան, էջ 138, 139

26 Մ. Ուռհայեցի, էջ 36

27 Ս. Օրբէլեան, էջ 85

28 Թ. Արծրունի եւ Անանուն, էջ 67

29 Մ. Ուռհայեցի, էջ 18

30 *Նոյն*, էջ 28

31 Արիստակէս Լաստիվերցի, *Պատմութիւն*, - www.digilib.am

խաւին պատկանող կամ հասարակ ծագում ունեցող զինուորականները, որոնք նախապէս կոչում եւ ընդարձակ կալուածքներ չէն ունեցել, բայց կարողացել են ձեռք բերել դրանք, իրենց հաւատարիմ ծառայութեան եւ ռազմական տաղանդի շնորհիւ:

Ազատների մի մասը տիտղոսներ եւ կոչումներ չունէր: Փիլիպէ իշխանի կտակագրում յիշատակւում են նաեւ կոչում չունեցող ազատներ. «Հուռ, Քուրդոյ, Խոսրով՝ Շապուհոյ որդիք, Ջեւանշէր՝ Թէոդորոսի որդի, Աշնակ՝ Վահանայ որդի, Ջագիկ՝ Վահանայ որդի, Վարդան՝ Ջանադայ որդի, Սահակ՝ Վասակայ որդի, Միհրան՝ Թորքայ որդի, Յովհան՝ Ներսէհի որդի, Հասան՝ Շապուհոյ որդի, Վահան՝ Մխիթարայ որդի»[32]: Այս ազատների համար կարեւորը անձնական յատկանիշներն էին, որոնց շնորհիւ նրանք երբեմն հրամանատարական պաշտօններ էին զբաղեցնում: Ազատների վերնախաւի համար այս երեւոյթը անընդունելի էր, քանի որ աւանդոյթի ուժով հրամանատարական պաշտօնները տրւում էին ազատների վերնախաւի ներկայացուցիչներին: Վասպուրականի թագաւոր Դերենիկ Արծրունին (943-958) Ապլղարիպ Հաւնունուն զրկում է սպարապետի պաշտօնից եւ նրա փոխարէն նշանակում իր ազատներից Սարգիս անունով մէկին[33]: Այն փաստը, որ հասարակ ծագումով ազատը աւելի բարձր է դասուել, քան ինքը, խիստ վիրաւորում է Ապլղարիպին եւ վերջինիս դաւաճանութեան պատճառ է դառնում:

Ազատների դասին բնորոշ եւս մի յատկանիշ էր զինուորական գործի ժառանգաբար փոխանցման աւանդոյթը: Ազատների որդիները մանուկ հասակից յատուկ ռազմական պատրաստութիւն էին անցնում, ծանօթանում ռազմական արուեստին: Թովմա Արծրունու Պատմութիւնը շարունակող հեղինակը նշում է, որ Գագիկ Արծրունին դեռ 15 տարեկան չկար, բայց տիրապետում էր զինուորական գործին[34]: Այս վկայութիւնը հիմք է տալիս կարծելու, որ ազատորդիները 15-20 տարեկան ազնուական, իշխանական ընտանիքների երիտասարդներն էին: Նրանք իրենց ծառայութիւնը սկսում էին՝ որպէս իշխանների թիկնապահներ, եւ այդ տարիքից արդէն ներգրաւուած էին ռազմական բնագաւառի մէջ. «Եւ մանկունք ձեռասունք թիկնապահք եւ յորս յենոյր իշխանն ձեռօք իւրովք», այն փաստը, որ իշխանը (Դերենիկ Արծրունին – Կ. Ո.) յենւում էր իր երիտասարդ թիկնապահների վրայ, նշանակում է, որ նրանք թէեւ սկսնակ, բայց յուսալի եւ պատրաստուած զինուորականներ էին: Աղբիւրներում ազատորդիները, որպէս զինուորականութեան ձեւաւորման ընթացքի մէջ գտնուող խումբ, յիշատակւում են առանձին՝ ազատների եւ միւս դասերի կողքին. «զիշխանս եւ զտեարս կողմնակալս եւ զկուսակալս աշխարհին, զազատս եւ զազատորդիս»[35]: Բուղայի արշաւանքի ժամանակ Գուրգէն Ապուպելճ Արծրունու բանակում յիշատակւում են նաեւ ազատորդիները. «բազմութիւն ազատաց եւ ազատորդեաց եւ նոցուն զօրաց քաջաց Վասպուրական տէրութեանս»[36]: Վասպուրականի թագաւոր Սենեքերիմը իր որդի Դաւթին Կոստանդնուպոլիս ուղարկելիս նրա հետ ճանապարհում է նաեւ ազատների որդիներին՝ որպէս օգնական զօրք. «...Եւ առաքեաց թագաւորն Վասիլ առ Սենեքերիմ առաքել առ նա զԴաւիթ թագաւորական ճոխութեամբ եւ առաքեաց զորդին իւր, ընդ նմին եւ որդիս ազատաց»[37]:

32 Ս. Օրբէլեան, էջ 85

33 Մ. Ուռհայեցի, էջ 13

34 Թ. Արծրունի եւ Անանուն, էջ 135

35 *Նոյն տեղում*, էջ 63

36 *Նոյն տեղում*, էջ 68

37 Մ. Ուռհայեցի, էջ 20-21

© National Library of Armenia

Արեւմտեան Եւրոպայում ազատորդիներին համապատասխանում են զինակիրները, որոնք 14-15 տարեկանից հմտանում էին ռազմական գործի մէջ: Մի քանի տարի ծառայելուց յետոյ, եթէ տուեալ զինակիրը աչքի էր ընկնում քաջութեամբ, նա իր սենեօրից խնդրում էր ասպետի կոչում շնորհել իրեն[38]:

Այսպիսով, Բագրատունեաց թագաւորութեան հռչակումից յետոյ ազատների դասը Հայաստանում Թ-ԺԱ դարերում ձեռք էր բերել որակական նոր յատկանիշներ, յստակ կանոնակարգուել էին ազատների պարտականութիւններն ու իրաւունքները: Ունենալով գործունէութեան կանոնակարգուած, համընդհանուր ընդունելութիւն գտած սկզբունքներ, հանդիսանալով բարձրաստիճան զինուորականներ՝ ազատները, յատկապէս՝ նրա վերին շերտը, առանձնանում էին զինուորականութեան ներսում եւ հասարակութեան մէջ՝ որպէս ինքնամփոփ, փակ հասարակական դաս:

38 **Д. Т. Денисон**, *История конницы*, militera.lib.ru/h/denison/index.html. Ж. Ж. Руа, История рыцарства, М., 2004, ст. 49.

ՍՄԲԱՏ ՄԱԳԻՍՏՐՈՍ

Կարէն Մաթեւոսեան

Անիի Բագրատունեաց թագաւորութեան Ժ դարի վերջերի եւ ԺԱ դարի սկզբների զինուորական գործիչ եւ եկեղեցաշինարար Սմբատ Մագիստրոսի վերաբերեալ երկու փաստ է յայտնի: Առաջինն այն է, որ նա 998 թ. Ծմբոյ գիւղի մօտ տեղի ունեցած ճակատամարտում մահմեդականների դէմ դուրս եկած քրիստոնէական միացեալ բանակի կազմում երկու այլ զօրավարների՝ Վահրամ Պահլաւունու եւ Աշոտ մարզպանի հետ գլխաւորել է Անիի թագաւորութեան 6000-անոց զօրամասը, եւ երկրորդը, որ 1010 թ. կառուցել է Անիի մերձակայ Բագնայրի վանքը:

Ո՞ր տոհմից էր սերում Սմբատ Մագիստրոսը: Ցայժմ եղած պատմագրական ողջ գրականութեան մէջ նա համարւում է սպարապետ Վահրամ Պահլաւունու որդին: Սակայն սկզբնաղբիւրների քննութիւնն այլ եզրակացութեան է յանգեցնում. պարզւում է, որ Վահրամ Պահլաւունին Սմբատ անունով որդի չի ունեցել եւ Սմբատ Մագիստրոսը միանգամայն այլ իշխանական տան ներկայացուցիչ է: Մանրամասնենք փաստերին:

1004 թուականին իր Տիեզերական պատմութիւնը *աւարտած Ստեփանոս Տարօնեցի Ասողիկը գրում է այն մասին, որ Մամլան ամիրան հսկայական բանակով յարձակուել է Դաւիթ կուրապաղատի իշխանութեան վրայ, իսկ վերջինս դիմել է Հայոց եւ Վրաց թագաւորներին՝ օգնութեան խնդրանքով: Գագիկ Ա Բագրատունին (990-1020)*[1] *յատկացրել է վեց հազար զինուոր, որոնց գլխաւորում էին երեք զօրավարներ: Այս հատուածը Ասողիկի Պատմութեան հրատարակութիւնից մէջբերելուց առաջ նշենք, որ այստեղ հետագայում ընդմիջարկութիւն է կատարուել, որը մասամբ փոխել է դրա բովանդակութիւնը:*

Հրատարակութեան մէջ կարդում ենք. «Եւ Գագկայ յամենայն զօրացն Հայոց հատեալ զգունդ ՁՌ (6000) զընտիր ընտիր վառելոցն՝ գումարէ ի ձեռն իշխանաց իշխանին Վահրամայ, որդւոյ Գրիգորոյ Պահլաւունւոյ, որ զՄարմաշէն եւ զԲրգներն շինեաց, եւ Սմբատայ մաժիստռոսի, որդւոյ Վահրամայ, եւ մարզպանին Աշոտոյ»[2]: *Տողատակում հրատարակիչը նշում է, որ օգտագործուած օրինակներից մէկում եղել է այլ տարբերակ. «... իշխանաց իշխանին Վահրամայ որդւոյ Գրիգորոյ. եւ Սմբատայ մաժիստռոսի որդւոյ Վահրամայ. եւ մարզպանին Աշոտոյ Պալհաւունւոյ, որ զՄարմաշէն շինեաց. որ զԲրգներն շինեաց»*[3]:

Այստեղ ընդմիջարկութեան գոյութեան մասին կռահել է Հ. Ներսէս Ակինեանը: Նա գրում է. «Ինձի կը թուի թէ Ասողիկի բնագիրը ունեցած է լուսանցագրութիւններ, որոնք սխալմամբ բնագրին մէջ առնուած են. կ'առաջարկեմ կարդալ. «... որդւոյ Գրիգորոյ Պահլաւունւոյ, որ զՄարմաշէն շինեաց, եւ Սմբատայ մաժիստռոսի որդւոյ Վահրամայ, որ զԲրգներն շինեաց, եւ մարզպանին Աշոտոյ»[4]:

1 Ըստ Կ. Իւզբաշեանի՝ Գագիկ Ա-ը մահացել է 1017 թ. (**К. Юзбашян**, *Армянские государства эпохи Багратидов и Византия IX-XI вв.*, М., 1988, ст. 156):

2 Ստեփանոսի Տարօնեցւոյ *Պատմութիւն տիեզերական*, աշխ. Ստ. Մալխասեանցի, Սանկտ-Պետերբուրգ, 1885, էջ 270

3 *Նոյն տեղում*

4 Ն. Ակինեան, *Ներսէս Լամբրոնացի*, Վիեննա, 1956, էջ 358

© National Library of Armenia